ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 99-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝

որոշում եմ.

1.Համայնքի զոհված զինծառայողների,զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման,պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկելու նպատակով կազմել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.
1)Երվանդ Շաքարյան - Համայնքի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
2)Նորիկ Մկրտումյան -Քարինջ գյուղի վարչական ղեկավար, հանձնաժողովի նախագահի տեղակալ,
3)Ռուզաննա Շահվերդյան -Աշխատակազմի քարտուղար հանձնաժողովի քարտուղար,
4)Ռոբերտ Գալստյան -Մարց գյուղի վարչական ղեկավար, հանձնաժողովի անդամ,
5)Անուշ Ամիրջանյան -Գլխավոր մասնագետ-հաշվապահ, հանձնաժողովի անդամ,
6) Նորիկ Թորոսյան - <<Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն>>ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, հանձնաժողովի անդամ,
7)Արփինե Սիմոնյան -1-ին կարգի մասնագետ, հանձնաժողովի անդամ:
2.Հանձնաժողովին՝ ստացված դիմումները քննարկել համայնքապետարանի աշխատակազմ դրանք մուտքագրվելուց հետո մեկամսյա ժամկետում, և հանձնաժողովի եզրակացությունը՝անհրաժեշտ ֆինանսական միջոցի հատկացման չափի և անհրաժեշտության մասին ներկայացնել համայնքի ղեկավարին:
3.Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ղեկավարի 2019թ. հուլիսի 23-ի <<Թումանյան համայնքի կամավոր խնդիրների լուծման իրականացման համար հանձնաժողով կազմելու մասին>> թիվ 74-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 100-Ա

ԱՐՑԱԽՈՒՄ ԸՆԹԱՑՈՂ ՄԱՐՏԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,40-րդ հոդվածի 2-րդ մասի,1-ին կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2020թ. հունվարի 17-ի <<Թումանյան համայնքի 2020թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 2 -Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի կամավոր խնդիրների լուծման իրականացման հանձնաժողով եզրակացությունը՝
որոշում եմ.

2020 թվականի սեպտեմբերի 27-ից Արցախում ընթացող մարտերում զոհված զինծառայող՝ Ռադիկ Վրույրի Հովակիմյանի հուղարկավորությունը պատշաճ կազմակերպելու նպատակով Թումանյան համայնքի բյուջեի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 /Վրույր Սիմոնի Հովակիմյանին տրամադրել դրամական օգնություն 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ**